

Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից

2015 թվականի հունվարի 29-ին

Պետական գրանցման համարը 3001556



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 43 -Ն

ք.Ստեփանակերտ

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ՝ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի ԹԻՎ 5/53 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ

1) ձերբակալված ընտրողները քվեարկությանը մասնակցում են իրենց հաշվառման վայրում կազմավորված տեղամասում.

2) ձերբակալված ընտրողների մասնակցությունը քվեարկությանը ապահովում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ ուղեկցող խմբերի միջոցով.

3) ձերբակալված ընտրողը քվեարկությանը մասնակցելու կամ դրանից հրաժարվելու դեպքում գրավոր դիմում է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարին.

4) ձերբակալված ընտրողների քվեարկությունը կազմակերպվում է այն հաշվարկով, որ ավարտվի մինչև քվեարկության օրվա ժամը 18.00-ն:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2005 թվականի մարտի 16-ի «Ձերբակալված քաղաքացիների՝ քվեարկությանը մասնակցելու կարգը սահմանելու մասին» թիվ 5/53 որոշումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

